րինացն, սրբութեանն պղծիչք, շինիչք մոխրատանցն, մոռացողք ճշմարտութեանն, հայհոյողք արդարութեան.- փախեա՞ն, կորացա՞ն[1], ամաչեցի՞ն:

16 Ո՞ տայր զգլուխս իմ ի ջուր, եւ զաչս՝ յաղբերս արտասուացե, եւ նստեալ լայի զհիգացելոցն կորուստ: *17* Ահա տեսէք, ահա մեռանի իգատենչն. այլ մի՛ տայք մեռանել: *18* Սատակի առաջի սեղանոյն արիւնահեղն. այլ աւգնել փութացարուք: *19* Գլխատի Սիմէի, այլ ձեռն տուք գթալով. «չէ՛ աստ», ասացէք Սողոմոնի. եւ ոչ ի քարեղէն սալս գրեալ անթողութիւնք աւրինացն: *20* Քրիստոս է աստ, *[Ծափս հարէք, ամենայն հեթանոսքզ]*, որ ասէ, թէ *Եկա՛յք առ իս, ամենայն աշխատեալք եւ ոյք ունիք բեռինս*[2] *ծանունս, եւ ես հանգուցանեմ զձեզէ*, եւ դարձեալ՝ թէ *Ոչ եկի կոչել զարդարս, այլ զմեղաւորս յապաշխարութիւնը*:

21 Այլ եւ ձեզ պատուիրեաց, հզաւրագունիցդ եւ կարողացդ, թէ Դուք որ կարողդ էք՝ զտկարութիւն տկարացն բարձէ՛քթ. կոչեցեալք[3] դուք ի Քրիստոսէ եւ բազմեալք, պատրաստեալք ուտել զհացն երկնաւոր՝ կոչեցէ՛ք եւ ընդ ձեզ զկաղսն եւ զկոյրսն եւ զհիւանդս. եւ մի՛ տայք թոյլ նոցա ընդ Ադոնեայ եւ ընդ Յովաբայ՝ զեղջերաց սեղանոյն բուռն հարկանել, [4][որ է անդամ մարմին, անբեղուն ըստ բուսոյ եւ անհամ ըստ ճաշակոյ, յուներէն]: *22* Դիել կաթն[5] յաւժարեցուցէք զտգէտսն ի սննդականութիւն, եւ յուրախարար բաժակէն ըմպել ուսուցէք, յանուշարար ուրախութիւն ոգւոցն փրկութեանն. յայնմ կաթնէ եւ ի գինւոյ, զոր յառաջաձայնեալ իմաստնաբանն[6] Սողոմոն շնորհաւք սուրբ Հոգւոյն յԵրգս երգոցն ասաց. *Քանզի գեղեցկացան ստինք քո, քոյր իմ հարսն, քանզի գեղեցկացան ստինք քո ի գինւոյժ*: *23* Բայց ի թմբրական գինւոյն հրաժարեցուցէ՛ք զտխեղծսն եւ զհիւանդացեալսն ոգւով զընկերսն, զոր ի հրէական ժողովրդոցն արբեալ անառակութեամբ՝ Արարած գիրք[7] մեծ մարգարէին յանդիմանեալ յիշատակէ այժմ եւ մինչ ի վախ-

---

1 *ՁԱտ.* փախեան, երացան. *այսպէս ըստ ուղղագրութեան ԲԳտ.*

ե Երեմ. Թ 1

զ Սաղմ. ԽՁ 2

2 *ՏՏ.* զբեռինս

է Մատթ. ԺԱ 29

ը Մատթ. Թ 13

թ Հռոմ. ԺԵ 1

3 *Ձ.* կոչեցեալ

4 *ԲԳտ. ունին ծնթ. «Աստանօր պակաս թուի բան, եւ յետագայդ՝ խառնակ իմն»:*

5 *Ձ.* գիդել կաթն

6 *ՏՏ.* իմաստաբանն

ժ Երգ. Դ 10

7 *Ձ.* մարգարէն:- Արարած գիրք-*ի մասին ԲԳտ. ունին ծնթ. «Այսինքն Գիրք Ծննդոց. բայց ոչ ի նմա՝ այլ յԵլից գիրս (ԼԲ, 6) գրեալ է բանդ»:*